մտածութեան լուծանեմ տարակուսութիւն մտաց քոց, Եղբայր, եթէ երկայնամտութեամբ ընթեռնուս ամենայն հատոր Օրէնս 'ի այսմ գրեցելոց նա ցուցանէ քեզ ամենայն ճանապարհ դիւրին և հեշտութեամբ ընթացքս իւր, և որպէս 'ի միոյ կալէ որում գտանի բիւրս բիւրոց քլայ ցորեանս 'ի նմանէ առնլով կից մի և 'ի յերեսս նորայ նայելով ցուցանէ քեզ կացութիւն և արժանաւորութիւն ցորենոյ բոլոր կալին յայնմիկ, նոյն գունակ ամենայն բիւր տանէ ընակողաց 'ի երեսս երկրի մերոյ հրաւիրելով կոչումն միմիայն երկուս այրս որ 'ի նոցանէ ընտրեալ և ընդունելութեամբ բիւրոյ տանէ եկեալ այս երկու անձինքս կալով և մնալով տեղակալ և փոխանորդ բիւր մի տանց կատարեսցեն գործս բիւր անձանց նոցա որ առաքեցին զինքեանց, այսմ կերպիւ բոլոր աշխարհն Հայոց ոչ հարկաւորեսցի հաւաքել յաւելի կամ պակաս հինգ հարիւր այրս փոխանակ ամենեցուն սոքօք կարի ընտրել զօրէնս ընդունելութեամբ բոլոր աշխարհի և ձեռնադրել։

Եւ վասն այն, որ խորհեցար թէ ով ոք որ գործածել կարէ օրէնս 'ի վերայ մեր, նա որ յօրէնս մեր հրամայէ և տայ նմայ նամակ պաշտօնատարութեան ըստ Օրինօք որ կացցէ և մնասցէ սպասաւոր բոլոր ազգին մերոյ և Ջատագով Օրինաց մերոց, այս այրս ըստ բանին Տեառն